Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Լոռու մարզի Դարպասի միջնակարգ դպրոց»

Թեմա՝ «Ներառական կրթության առավելություններն ու բացթողումները»

Վերապատրաստող, մենթոր՝ Լուսինե Քալաշյան

Ուսուցիչ՝ Սուսաննա Նիկոլյան

2023

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..….3
2. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ:
   2.1 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ……5
   2.2 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……8
   2.3 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ՀՀ._ՈՒՄ……13
3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……...……18
4. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……19
   ՀԱՎԵԼՎԱԾ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունն կրթական համակրգում առանձին տեսակ չէ, այլ կրթության հատկանիշ, որը ենթադրում է յուրաքաքնչյուր երեխայի կարիքին համապատասխան կրթության իրականացում: Սա կրթական գործընթաց է, որը ուղղված է բոլոր սովորողների կարիքներին ընդգրկելով նաև հաշմանդամություն, մտավոր և ֆիզիկական այլ առանձնահատկություններ ունեցող երեխաներին, բռնության ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական խոքրամասնություններ, հակամարտությունների պատճառով ողբացած երեխաներ և այլն: Այստեղ պահանջվում է բացառապես համակարգի հարմարեցում, այլ ոչ երբեք երեխայի: Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալ է: Այն հաստատում է որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ հանրակրթական համակարգը պետք է հարմարվի բոլոր բոլոր սովորողների հոգեկան, մտավոր և ֆիզիկական զարգացման կարիքներինև պահանջմունքներին: Ներառական կրթությունը բացառում է խտրականությունը:
Ներառական կրթությունն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, և հանրակրթական ժամակարգը պետք է հարմարվի բոլոր սովորողների անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ է զինել ուսուցման գործընթացի ճկունությամբ:
Ներկա ժամաակներում լուրջ խնդիրներից է համարվում երեխաների և հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների զարգացման ու կրթությանը խոչընդոտող հանգամանքները: Ներառական կրթությունն ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար: Սակայն պետք է փաստել այն, որ ներառական կրթությունը ոչ միանշանակ է ընդունվում բոլորի կողմից: Այսօր հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ շատ կարծրատիպեր կոտրվել են, սակայն երբ մարդիկ պետք է իրենց խոսքը գործով ապացուցեն այստեղ նկարվում է որոշակի բաց: Շատերն են ասում, որ հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, սովորի դպրոցում, բայց դեմ են, որ իրենց երեխայի հետ սովորի դասարանում: Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն նույն իրավունքները, ինչպես մյուսները: Հատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաներ են համարվում այն դպրոցական երեխաները, որոնք ունեն երկարատև խնամքի, բուժման, վերականգնման կարիք, որոնք պահանջում են լիարժեք, բազմակողմանի և ծրագրային մոտեցում: Ամբողջ աշխարհում ներառումը այլևս ապրելակերպ է, մարդկանց համատեղ ապրելու, աշխատելու և սովորելու կենսակերպ: Յուրաքանչյուր երեխա իրեն պետք է կարևորված զգա հասարակությունում:

Ներառական կրթությունը միտված է գտնելու ուղիները, որոնց միջոցով մեր դպրոցները, դասերը, ծրագրերը և դասընթացները լինեն այնպիսին, որ բոլոր երեխաները կարողանան մասնակցել կրթական պրոցեսին: Ներառումը բացահայտում է նաև դասավանդման տարբեր մեթոդներ, որպեսզի բոլոր երեխաները ակտիվորեն ներգրավվեն դասարաններում: Այս տերմինը միտում ունի զարգացնել բարեկամություն, փոխհարաբերությունների և փոխադարձ հարգանքի ստեղծում սովորողների միջև և սովոևողների ու ուսուցիչների միջև:Դպրոցում ներառականությունը չի վերաբերում միայն որոշ սովորողների:
Ներառականությունը հասկացություն չէ, որին երեխան պետք է լինի պատրաստ: Բոլոր երեխաները պետք է հաճախեն միևնույն սովորական դասերի: Ներառական

կրթություն մի մեթոդ է, որը մեզ ստիպում է լինել ավելի կրեատիվ և մեր դպրոցների միջավայրը դարձնել այնպիսին, որ հասանելի լինի բոլոր սովորողների համար : Կրեատիվ հասկացության տակ կարող ենք հասկանալ օրինակ, որ դասավանդողն այնպիսի մեթոդներ և ստրուկտուրաներ կիրառի, որ դասընթացին մասնակցեն բորոր սովորողները:

Որպես արժեք, ներառական կրթությունն արժեվորում է այն ակնկալիքիը, որ մենք ցանկանում ենք, որ մեր երեխաներն ընդունվեն իրենց կյանքում այնպիսին ինչպիսին կան:

Հետազոտական աշխատանքը կատարվել է դպրոցի ԿԱՊԿՈՒ և մնացյալ աշակերտների մոտ: Աշխատանքի նպատակն է՝ ՈՒսումնասիրել ներառական կրթության կարիք ունեցող երեխաների իրավունքների ողջ համակարգը, քննարկել և վեր հանել ներառական կրթության առավելությունները, թերությունները, հաջողությունները և բացթողումները:

Ներառական կրթության առավելություններն ու բացթողումները:

1.1 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալ է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է համալրվեն բոլոր սովորողների՝ զարգացման հապաղումներով, արատներով և առանց դրանց, անհատական պահանջմունքներին: Սակայն, ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես, երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Տնից ու ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է տան, ըմտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքներին: Չնայած հատուկ դպրոցների որոշ կրթական առավելությունների՝ կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը ընտանիքից ու տնից հաճախ խոսում է հասարակության մեջ այդպիսի մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարմունքների մասին:

Կրթութական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին կիրառել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների:

Մեր հասարակությունը, ցավոք, դեռ պատրաստ չէ իր կողքին տեսնել և ընդունել հատուկ կարիքներով մարդու: Կարծրատիպը կոտրված չէ: Ովքեր քիչ թե շատ ծանոթ են ներառական կրթությունը, ցավոք չեն տիրապետում խոսքի էթիկային: Անհրաժեշտ է օգտագործել այնպիսի «չեզոք» բառեր, որոնք չեն վիրավորի հաշմանդամներին, ովքեր զգայուն են իրենց բնութագրող բառերի նկատմամբ: Պետք է խուսափել այնպիսի բառերից, ինչպիսիք են՝ հիվանդ, թույլ, անկարող, ոչ լիարժեք, ոչ նորմալ, խեղված և այլն…

Ներառական կրթության հիմքում մարդու՝ կրթությունից օգտվելու իրավունքն է: Միջազգային տարբեր փաստաթղթերը պետություններին ուղղորդում են իրենց ջանքերն ուղղելու իրավունքահենք կրթությանը: ՅՈՒՆԻՍԵՖ-ի սահմանման համաձայն, կրթական համակարգը ներառական է՝ եթե ներառում է բոլոր աշակերտներին և ողջունում ու օժանդակում է նրանց սովորելու հարցում: Ոչ ոք չպետք է բացառվի: Բոլոր երեխաները՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները, ունեն կրթության իրավունք (ՅՈՒՆԻՍԵՖ, 2017): Այս պնդումը համահունչ է ՄԱԿ-ի՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի ներառական կրթությանը վերաբերող ընդհանուր մեկնաբանություն 4-ի հետ, որը կրթությունը սահմանում է որպես. §մարդու հիմնարար իրավունք¦ և §սկզբունք, որն արժևորում է բոլոր սովորողների բարօրությունը, հարգում է նրանց արժանապատվությունն ու ինքնուրույնությունը և ընդունում է հասարակության մեջ արդյունավետորեն ներառվելու ու իրենց նպաստը բերելու անհատների

պահանջմունքները և կարողությունը¦ (Միավորված ազգեր, 2006): Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ ներառումը սովորողների բազմազանությանը դրականորեն արձագանքել ու անհատական տարբերությունները ոչ թե որպես խնդիր, այլ որպես ուսուցումը հարստացնելու հնարավորություն: Ներառումը համակարգային բարեփոխման շարունակական գործընթաց է, որը նախատեսում է փոփոխություններ դասավանդման մեջ և ուսումնական ծրագրերում, դպրոցական շենքերում, դասասենյակներում, խաղալու համար հատկացված տարածքներում, տրանսպորտում, կրթության քաղաքականություններում և ռազմավարություններում՝ տվյալ տարիքի բոլոր աշակերտներին իրենց պահանջներին ու նախասիրություններին լավագույնս համապատասխանող՝ հավասար և մասնակցային ուսումնական փորձառություն ու միջավայր տրամադրելու տեսլականով: Հետևաբար, անցումը դեպի ներառում ոչ թե պարզապես տեխնիկական կամ կազմակերպչական փոփոխություն է, այլ նաև հստակ փիլիսոփայությանը հավատարիմ շարժում: Ներառումն արդյունավետորեն իրականացնելու համար երկրները պետք է գործնական գաղափարների հետ մեկտեղ սահմանեն կրթության ներառականության սկզբունքներ (ՅՈՒՆԵՍԿՕ, 2005): Հեղինակները՝ քաջ գիտակցելով, որ կրթության ներառականությունը հասկացություն է, որը վերաբերում է երեխաների բոլոր խմբերին, կանգ են առել սոցիալական, մշակութային խոչընդոտների և կարծրատիպային վերաբերմունքի հետևանքով կրթությունից դուրս մնացող զարգացման խանգարումներ ունեցող երեխաների վրա: Բացի այդ, ներառման հիմնահարցերը դեռևս արդիական են Հայաստանում, ինչպես մանկավարժների պատրաստման ամբողջ գործընթացում (հիմնականում վերաբերում են հատուկ կրթությանը) այնպես էլ մանկավարժների՝ պետության ու դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող վերապատրաստումներում: Տարբերությունները զգալի են ուսուցիչների պատրաստման և վերապատրաստումների ծրագրերեում, հատկապես հաշմանդամության կենսաբանահոգեբանասոցիալական մոդելի վրա հիմնված ամբողջական մոտեցման տեսակետից:

Բոլոր աշակերտներին որակյալ կրթության տրամադրումը լուրջ մարտահրավեր է ուսուցիչների համար: Ներառական կրթությունը պահանջում է մասնագետների և ընտանիքների կողմից ուսուցման գործընթացի վերակառուցում և երեխաների համար լավագույն միջավայրերի ստեղծում համատեղ ջանքերով, որպեսզի հաջողության հասնեն դպրոցում և հասարակական կյանքում: Նման համակառուցումը պահանջում է ոչ միայն ուսուցիչների համագործակցություն, այլև թիմային աշխատանքի տարբեր ձևերի կիրառում: Միևնույն ժամանակ այն պահանջում է դասավանդման նոր ձևեր, որոնք լավագույնս կապահովեն բոլոր ռեսուրսների պատշաճ օգտագործումը: Մինչ երկիրն անցնում է ներառական կրթության գործելակերպերին, թիմային աշխատանքը և համագործակցությունը կարևորվում են կրթության բոլոր մակարդակներում:

Հայաստանում մեծ է ուսուցչի օգնականի դերը ներառական կրթության ոլորտում: Այն միտված է բոլոր աշակերտների համար որակյալ ծառայությունների մատուցմանը: Այս հաստիքը ստեղծվել է ներառական կրթություն իրականացնող դպրոցում երեխայի կրթության արդյունավետությանը նպաստելու նպատակով: Դպրոցներում ուսուցչի օգնականի պարտականություններն են.

● օգնել ուսուցիչներին դասը պլանավորելու, դասավանդելու հարցում,

● աջակցել ԱՈԷՊ-ի իրականացմանը,

● աջակցել առարկայական ուսուցիչներին՝ պատշաճ մեթոդներ և տեխնիկաներ կիրառելու հարցում,

● կատարել դասարանի և առանձին աշակերտների գնահատում և տվյալների վերլուծություն,

● օգնել ուսուցիչներին պատրաստելու դասավանդման նյութերը բոլոր աշակերտների, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների համար,

● մասնակցել դասի նախապատրաստման աշխատանքներին,

● ուսուցիչների հետ միասին հիմնավորել, գնահատել և դիտարկել առանձին երեխաների ուսումնառության գործընթացի դժվարությունները,

● նպաստել աշակերտների ինքնուրույնության զարգացմանը,

● պաշտպանել աշակերտների իրավունքներն ու ազատությունը,

● համագործակցել բազմամասնագիտական թիմի հետ,

● մասնակցել առարկայական խմբերի մեթոդական քննարկումներին,

● մասնակցել սոցիալական ծառայությունների կողմից վերհանվա:

Ներառական կրթությունը նաև մեծ առավելություն ունի ուսուցիչների, դպրոցների, ընտանիքների և համայնքի համար, քանի որ նմանատիպ ուսուցումը հասարակության բոլոր շերտերի համար ստեղծում հավասար և արդար պայմաններ: Ներառական կրթությունը հնարավորություն է ընձեռնում երեխային մնալ իր ընտանիքի հետ, հաճախել իր համայնքի դպրոցը, իր ասակակից ընկերներից չտարբերվելով և չմեկուսանալով, ինչը կենսական նշանակություն ունի ցանկացած երեխայի համար, նրա զարգացման բոլոր փուլերի համար: Կրթության տեսանկյունից - Ներառական դպրոցին ուղղված բոլոր երեխաների համատեղուսուցման պահանջը խթանում է նորանոր ուղիներ, արդյունավետ մեթոդների և նպատակաուղղված աշխատանքների որոնումը, որոնք կհամապատասխանեներեխաների պահանջներին, անկախ նրանց առանձնահատկություններից և դրանցով պայմանավորված հիմնախնդիրներից: Ի վերջո ներառական կրթությունը այլևս մարդու իրավունք է, այն կարող է ապահովել բարձրորակ կրթություն և հիմնավորված է պետական և սոցիալական առումով:

1.2 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներառական կրթությունը շատ կարևոր է, քանի որ

- Բոլոր երեխաները կարող են դառնալ իրենց համայնքի մի մասը և ունենալ պատկանելության զգացում և ավելի լավ պատրաստվել համայնքի կյանքում, որպես երեխաների և չափահասներ:
- Այն առաջարկում է ավելի լավ ուսուցման հնարավորություններ: Տարբեր ունակություններ ունեցող երեխաները հաճախ ավելի լավ են մոտիվացվում, երբ նրանք սովորում են այլ երեխաների հետ:
- Բոլոր երեխաների սպասումները ավելին են: Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս զարգացնել անհատի ուժերն ու տաղանդը:
- Այն թույլ է տալիս երեխաներին աշխատել անհատական նպատակների վրա, իրենց տարիքի այլ աշակերտների հետ միասին:
- Այն նաև խրախուսում է ծնողների մասնակցությունը իրենց երեխայի կրթության մեջ:
- Այն քաջալերում է հարգանքի և պատկանելության մշակույթը: Այն նաև հնարավորություն է ընձեռում ծանոթանալու անհատների տարբերություններին և ընդունել այդ տարբերությունները:
- Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս բոլոր երեխաներին միմյանց միջև զարգացնել ընկերությունը:Ընկերությունն էլ իր հերթին զարգացնում է դերի կարևորության մոդելը:
- Այն նաև խրախուսում է ծնողների մասնակցությունը իրենց երեխայի կրթության մեջ:
- Այն քաջալերում է հարգանքի և պատկանելության մշակույթը: Այն նաև հնարավորություն է ընձեռում ծանոթանալու անհատների տարբերություններին և ընդունել այդ տարբերությունները:

- Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս բոլոր երեխաներին միմյանց միջև զարգացնել ընկերությունը:Ընկերությունն էլ իր հերթին զարգացնում է դերի կարևորության մոդելը:

Ներառական կրթության գաղափարի երաշխիքը մարդու կրթության իրավունքն է: Ներառական կրթությունը հոգ է տանում բոլոր սովորողների մասին, հատկապես նրանց, ովքեր զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից՝ նկատի ունենալով հատուկ կարիքներով սովորողներին, հաշմանդամներին և այլոց: Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դպրոցներին ծառայել բոլոր երեխաներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկի ավելացմանը զուգընթաց բարեփոխումներ են տեղի ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների կրթական կարիքի ընթացակարգերում՝ ուսումնասիրության կարիք ունեն ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական միջավայրում սոցիալականացման հնարավորությունների ընդլայնմանը:

Այս համակարգում դեռևս առկա են մի շարք բացթողումներ և խնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ անդրադառնում են ներառական կրթության որակի վրա, և այն երբեմն կրում է ձևական բնույթ: Կարծում ենք, որ նման խնդիրների պարզումը և բարձրաձայնումը ևս մի առիթ է դրանց մասին խորհելու, դրանց լուծման ուղիները որոնելու և կիրառության մեջ դնելու տեսանկյունից:

Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի մարդկային ու ֆունկցիոնալ զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: Ուստի, որևէ տեսակի հաշմանդամություն չի կարող արգելք լինել մարդու կրթություն ստանալու իրավունքի համար: Այսպիսով, ներառումը ենթադրում է մի գործընթացի ծավալում, որն ուղղված է բոլոր սովորողների բոլոր կարիքներին՝ ներառյալ նրանց, ովքեր ենթակա են մարգինալացման և բացառման:

Ներառական կրթությունը ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես, երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Որոշ ուսուցիչներ ենթադրում են, թե կրթութական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ կրթութական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին (այդ թվում նաև սահմանափակ հնարավորություններ ունեցող) որակյալ կրթություն տալու համար: Ի լրումն այդ ամենի, անհրաժեշտություն կառաջանա հատուկ տեխնիկական օժանդակության և երեխայի զարգացման կոնկրետ խանգարումներով պայմանավորված սարքավորումների գործադրման:

Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը):

Ներառում չի նշանակում
Միայն հատուկ կրթության բարեփոխումներ, այլ՝ կրթական համակարգի բարեփոխում:
Արձագանքել միայն առանձնահատկությանը, այլ բարելավել կրթության որակը բոլոր սովորողների համար:
Հատուկ դպրոցներ, այլ թերևս՝ լրացուցիչ օժանդակություն աշակերտներին հանրակրթական դպրոցի շրջանակներում:
Բավարարել միայն հաշմանդամ երեխաների կարիքները: Բավարարել մի երեխայի կարիքները, մեկ այլ երեխայի հաշվին

Պետք է իրատես լինել և խոստովանել Հայաստանում ներառական կրթության հետ կապված խնդիրներն ու խորընդոտները բազմազան են և տարբեր ոլորների հետ կապված՝ շենքային, սոցիալ-տնտեսական, առողջապահական, ֆինանսական, քաղաքական, հասարակական, բարոյահոգեբանական, ազգային մտածելակերպի քարացած ու չարթարացված տեսակետների: Քաղաքակրթության հետ համաժամանակյա քայլեր անելու նպատակով պարզապես անհրաժեշտ է չեզոքացնել այս խոչընդոտները, լուծել անլուծելի թվացող խնդիրները և քայլ առ քայլ հասնելայն երկրների ցակին, որոնք բազմաթիվ փայլուն օրինակներ են կերտել, հասել մեծ հաջողությունների: Անելիքները դեռ շատ են և ահա այն խնդիրների ցանկը, որոնց բախվում ենք՝

1. Ներառական դպրոցներըչունեն ներքին հարմարեցվածություն, թեքահարթակներ և՛ ներսում, և՛ դրսում, թեքահարթակ կարելի է տեսնել միայն 1-ին հարկում: Գրեթե ոչինչ նախատեսված չէ այն երեխաների համար, որոնք ունեն հենաշարժողական խնդիրներ, նրա դասասենյակը կարող է գտնվել վերջին հարկում: Նման խնդիրները բավական են, որ երեխան հրաժարվի դպրոց հաճախել: Հնարավոր է լինում միայն նրանց համար, ում խնդիրները ավելի քիչ են:

2. Ներառական դպրոցներում սանհանգույցները հարմարեցված չեն: Հիմնականում տիպային են, որոշ դեպքերում նույնիսկ անմխիթար:

3. Դասասենյակները հարմարեցված չեն անհրաժեշտ գույքով, այն ինչ դրանք համարվում են առանձնահատուկ դասասենյակներ:

4. Մարզադահլիճները հարմարեցված չեն, չկան մասնագետ-ուսուցիչներ, ովքեր կաշխատեն ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ:

5. Մասնագիտական ռեսուրսների պակաս, որն ունի իր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները:

6. Առարկայական ուսումնական պլանի մշակում: Այս պլանը յուրաքանչյուր խնդրով երեխայի երեխայի համար կազմվում է անհատապես ուսուցչի և ծնողների անմիջականմասնակցությամբ, սակայն արդյոք բոլոր ծնողներն են տեղյակ և ի վիճակի մասնակցել պլանի կազմանը: Որոշ առարկայական ուսուցիչներ շատ մեծ ուշադրություն չեն դարձնում անհատական պլանին:

7. Ուսուցիչների դասընթացների և վերապատրաստման կազմակերպման պակաս ուսուցիչներին նրառական կրթության մասին ընդհանուր գիտելիքներ տալուց զատ կարևոր է նաև մասնագիտականհմտությունների և գիտելիքների զարգացումը շատ հաճախ նրանք բախվում են այնպիսիխնդիրների, որոնց պատասխանը չունեն: ՈՒսուցիչների մեծամասնությունը չի տիրապետում ԿԱՊԿՈՒ- ի առանձնահատուկ մեթոդների: Սա հանգեցնում է ցածրորակ ներառման կամ նույնիսկ կրթական գործընթացի բացառման՝ երեխան դուրս է մնում ծրագրից:

8. Ներառական կրթությունը պետք է սկսվի նախադպրոցական տարիքից :

9. Խտրական և վերապահումներով մոտեցում առանձնահատուկ կարողությունների տեր երեխաներ նկատմամբ: Սա կապված է մեր հասարակության ընդհանուր կրթական զարգացվածության, աշխարհայացքի հետ:

10. Ներառական դպրոցներն ավարտելուց հետո ԲՈՒՀ - ընդունվելը ևս բազմաթիվ խնդիրներ է առաջացնում:

11. Հասարակության տարբեր շերտերում և գործնական տարբեր ոլորտներում ԿԱՊԿՈՒ- ով երեխաների գիտելիքների և կարողությունների իրացման բարդությունը:

Այս բոլոր կետերը երաշխիք են անձի զարգացման միջոց հանդիսացող կրթադաստիրակչական միջավայրի առողջ ստեղծմանը: Ներառական կրթական տեխնոլոգիաների առանձնահատկությունն է լինել կրթական կրթական ընդունված համակարգերի և արտաին միջավայրի հետ մշտական համագործակցության մեջ: Սա մի յուրահատուկ ոդարացի մոտեցում է բազմակողմանիորեն արժևորել ցանկացած իրողություն և երևույթ, ընդունել այլոց ներաշխարհն ու հայացքները: Դեռևս 2000թ-ից ներառական կրթությունը ՀՀ կրթական բարեփոխումներին առնչվող առաջնահերթ խնդիրներից մեկն է եղել:

ԿԱՊԿՈՒ անձանց կրթության մասին օրենքը հաստատվել է 2005թ-ին որից հետո ներառական կրթությունը ընդգրկվել է կրթության զարգացման պետական ծրագրերի մեջ: Հաշմանդամութուն ունեցողներին ծաղրանքով, քամահրանքով և խտրականությամբ վերաբերվելը, մերժելը դաստիրակության հետ կապված խնդիր է, սա մի ցածրորակ մտածելակերպ է, որը պետք է արմատախիլ անել հասարակության շերտերից: Ընտանիքներում պետք է մեծ աշխատանք տանել, այնուհետև դպրոցում: Հարկ է նշել Դանիայի, Շվեդիայի, Կանադայի ներառական կրթության օրինակները: Շվեդիայի փորձը բավանին հետաքրքիրէ և հաջողված: Այստեղ համատեղ

զարգացրեցինմանկավարժական և հոգեբանական փորձարարական ավանդույթները, ինչն էլ հիմա հանդիսացավ ինտեգրման մանկավարժությանը: ԳԳործի դրվեց ականավոր գիտնական, բժիշկ և մանկավարժ Հ. Հանզելմանի բուժական մանկավարժության հարուստ ավանդոիյթները: Կրթությա և դստիրակության ինտեգրման մոտեցման պատմության լույսի ներքո հետաքրքիր է Հանզելմանի առաջարկած սահմանումը:

Սա ուսմունքայնպիսի երեխաների կրթության,, դաստիրակության և խնամքի մասին, որոնց հոգեբանա-ֆիզիկական զարգացումը հետ է մնացել անհատական և սոցիալական գործոնների հետևանքով: Սոցիալականի հետ նա կապում էր միջավայրում առաջացած շեղումները, սա հարում էր Տրոշինի, Վիգոտսկու գաղափարներին՝ արատի սոցիալականով պայմանավորվածության մասինև հետևությունը՝ երեխաներին մանկական ընկերակցություններում ինտեգրումը: XX դարի սկզբին այս թեմային առնչվեց նաև Մոնտեսորիի գործունեությունը: Չնայած Իտալիայումհաստատված ֆաշիստական ռեժիմին, Մոնտեսորիին հաջողվեց հենց հիմքում ստեղծել ինտեգրված ուսուցում, կրթության և դաստիրակության, մարդասիրական համակարգ: Սա գրել է Մոնտեսորին իր << Երեխայի բանականությունը>> գրքում:

1.3 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ՀՀ._ՈՒՄ

է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ և ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, սակայն մեր հանրապետությունում այն իրականացվում է մի շարք բացթողումներով:

Թեև ներկայումս ՀՀ-ում իրականացնում է ներառական կրթություն, այդուհանդերձ ոչ մի դպրոցում այն լիարժեք չի համապատասխանում ներառական կրթության այն նկարագրությանը, որն առկա է տեսականորեն: Այդ բացն առկա է ներառական կրթության իրականացման համար պատասխանատու բոլոր օղակներում: Երեք տարվա աշխատանքային փորձը ներառական կրթություն իրականացնող տարբեր դպրոցներում, քննարկումները և զրույցները մանկավարժների հետ ու նրանց դժգոհությունները կրթական գործընթացից, թույլ են տալիս առանձնացնել հետևյալ հիմնական պրոբլեմները, որոնք առկա են ներառական կրթություն իրականացնող դպրոցներում՝

- ✓ շենքային պայմաններ: Անգամ առաջին ներառական դպրոցներում, որոնք արդեն 10 տարուց ավելի է, ինչ ներառական կրթություն են իրականացնում, դեռևս շենքային պայմանները հարմարեցված չեն երեխաների առանձնահատկություններին, դպրոցներում բացակայում են դասապրոցեսը ավելի հասկանալի և հասանելի դարձնող պարագաները: Չկան նաև հարմրեցված սանհանգույցներ, ինչ արդյունքում ներառված երեխաները ստիպված են օգտվել մանկավարժների համար նախատեսված սանհանգույցից, ինչն էլ դժգոհություն է առաջացնում նրանց մոտ:
- ✓ աշակերտների քանակը: Աշակերտների քանակը դասարաններում շատ է, 4-5 ներառված երեխա առաջին դասարանում, որոնց մոտ առկա է ադապտացիայի խնդիր, և հատկապես առաջին դասարանում լուրջ խոչընդոտներ են առաջանում դասապրոցեսը կազմակերպելու, մյուս աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու ուղղությամբ:
- ✓ ուղեկցող մասնագետներ: Միայն ուսուցչուհին չի հասցնում աշխատել և դասարանի և ներառված աշակերտների հետ, ուստի անհրաժեշտություն է առաջանում ուղեկցող-օգնական մասնագետների առկայության դասարանում, կամ երեխաների հետ դասին մասնակցում է ծնողը: Սա ևս խոչընդոտում է նորմալ դասապրոցեսի իրականացմանը, քանի որ դասարանում աշխատող մի քանի մասնագետները, ինչքան էլ փորձեն ցածրաձայն աշխատել, միևնույն է աղմուկ է առաջանում: Բացի այդ, այլ մասնագետի առկայությունը դասարանում արդեն իսկ առանձնացնում է ներառված երեխային հասակակիցներից:
- ✓ ներառվող երեխայի մտավոր զարգացման մակարդակը: Ներառումը համընդհանուր գործընթաց է, ինչի արդյունքում դպրոցներում հայտնվում են զարգացման տարբեր աստիճանի խանգարումներով երեխաներ: Կարելի է նկատել մտավոր ծանր խանգարումներով երեխաներ, ովքեր ներառական դպրոցում ապահովում են միայն ֆիզիկական ներկայություն: Բնականաբար, նրանք ծրագիրը չեն հասցնում և պահանջում են անհատական մոտեցում: Եթե անգամ նրանք դասարանում լինում են այլ մասնագետների ուղեկցությամբ,

միևնույնն է նրանց հետ տարվում է այլ աշխատանք, և արդյունքում ստացվում է անհատական պարապմունք դասարանում, և ոչ թե ներառում:

- ✓ անվտանգության ապահովում: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում լուրջ խնդիր են ներկայացնում վարքային խանգարումներով երեխաները, հատկապես ագրեսիվ վարքով, ովքեր առանց ուղեկցող անձի, կարող են վտանգ ներկայացնել իրենց դասընկերների և մանկավարժների համար:
- ✓ ինքնասպասարկման հմտություններ:Հաճախ կարելի է դպրոցներում տեսնել այնպիսի երեխաների, ում մոտ զարգացած չեն ինքնասպասարկման հմտությունները: Նրանք կարիք ունեն մասնագետների կամ ծնողի մշտական ուղեկցության, ովքեր կհոգան նրանց ֆիզիոլոգիական պահանջմունքները:
- ✓ ծնողների անադեկվատ պահանջներ: Հաճախ հանդիպող խնդիրներից է ներառված երեխաների ծնողների անադեկվատ պահանջները երեխաներին և մասնագետներին: Ծնողները շատ դեպքերում երեխաներից պահանջում են ավելի, քան նրանց հնարավորություններն են: Նրանք իրենց երեխային տեսնելով նորմալ զարգացում ունեցող հասակակիցների կողքին, ենթադրում են, որ նա էլ պետք է հասցնի յուրացնել նույնքան, որքան իր դասընկերները: Եվ արդյունքում ավելի է ընդգծվում ԿԱՊԿՈՒ երեխայի տարբերությունն իր դասընկերներից: Հաճախ նաև ծնողները նկատում են իրենց երեխաների փոքրիկ հաջողությունները, բայց դրա համար ակնկալում են գերազանց գնահատական, որը սակայն գնահատման ընդհանուր չափանիշներով գերազանցի չէ: Իսկ գնահատման առաձին համակարգի առկայությունը ևս առանձնացնում է ներառված երեխաներին և հակասում ներառման գաղափարախոսությանը:
- ✓ սոցիումի անհանդուրժողականություն: Մեր սոցիումն առ այսօր պատարստ չէ զարգացման տարբեր առանձնահատկություններով անձանց ընդունել իրենց հավասար լիարժեք անձ: Մանկավարժները նշում են, որ շատերը, անցնելով ներառական կրթություն իրականացնող դպրոցի կողքով, այն անվանել են «դեբիլների դպրոց» և պարզ է, որ նման իրավիճակում չի կարող խոսք լինել ներառման մասին: Սրա պատճառն այն է, որ ներառական կրթությունը ՀՀ-ում սկսեց իրագործվել «միանգամից», ինչին պատրաստ չէին, ոչ մանկավարժները, ոչ աշակերտները և ոչ էլ սոցիումն առհասարակ:
- ✓ Ուղեկցող մասնագետի կամ ծնողի ներկայությունը դասին և դասամիջոցին: Հատկապես տարրական դասարաններում հաճախ են դասընկերները հարցնում, թե ինչու իրենց դասընկերը մենակ չի նստում, ինչու նա օգնող ունի: Իսկ արդեն դեռահասության տարիքում այն ներառված երեխաները, ում ինտելեկտը պահպանված է, սկսում են իրենք հետաքրքրվել, թե ինչու իրենց կողքին մշտապես մեկն առկա է, իսկ դասընկերները նստում են մենակ: Նման իրավիճակ ստեղծվեց աուտիզմով երեխայի մոտ, ում հետ աշխատել եմ 3-րդ և 4-րդ դասարաններում, և հանկարծ 4-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսվեցին վարքային լուրջ փոփոխություններ, ագրեսիվ հակազդում իմ ներկայությանը և հանգիստ վարքագիծ իմ բացակայության ժամանակ: Աշխատանք տարվեց նրա ինքնուրույնության ուղղությամբ և նա սովորեց դասերին մասնակցել առանց ուղեկցող-մասնագետի:
- ✓ Ներառված երեխաների հաճախումները 2-3 դասաժամից և շուտ տուն գնալը: Հաճախ կարելի է հանդիպել աշակերտների դժգոհության, թե ինչու իրենց դասընկերը կարող է ուշացած գալ և չստանալ նկատողություն, իսկ իրենք մշտապես պատժվում են ուշանալու համար: Միջին և բարձր դասարաններում էլ

դասընկերները այս իրավիճակին այլ մեկնաբանություն են տալիս՝ հիվանդ է, ոչինչ թող ուշ գա:

- ✓ Արտոնություններ ներառված երեխաներին (դասի ժամանակ կարող են վեր կենալ, քայլել, դուրս գալ դասարանից, զբաղվել այլ բաներով), ինչն արդեն ենթադրում է տարբեր պահանջներ և պայմաններ ներառված երեխաների համար, որը ևս հանգեցնում է հասակիցների դժգոհությանը: Եվ ստացվում է այնպես, որ ներառված երեխան միևնույնն է չի ենթարկվում համընդհանուր մշակված նորմերին և կանոններին:
- ✓ Ներառված երեխաներին անվճար սնունդ տրամադրելը: Սա ևս նրանց առանձնացնում է հասակակիցներից: Ստացվում է այնպես, որ ներառված երեխանը քաղց են զգում, իսկ նորմալ զարգացում ունեցող հասկակիցները ո՞չ:

Ֆիզիկական տարբերությունները, որոնք սակայն մեկուսացման պատճառ չեն կարող լինել մյուսների բացակայության ժամանակ:

Առաջարկներ ներառական կրթության բարելավման ուղղությամբ՝

Շենքային և դասարանական պայմանների հարմարեցում: Սա, կարծում են առաջին պայմանն է, որը շատ կարևոր է զարգացման խանգարումներով երեխաներ դպրոցում գտնվելու համար: Սանհանգույցների, դասասեղանների, դասարանների հարմարեցում, անհրաժեշտ պարագաներով հագեցվածություն, բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական ծրագերի կազմակերպումն ու իրականացումը:
Ներառված աշակերտների թվի հարաբերական սահմանափակում: Ցանկալի է դասարանում ներառված լինեն 2-3 զարգացման առանձնահատկություններով երեխաներ: Հարաբերական սահմանափակումը կախված է երեխայի մոտ խնդիրի ծանրության աստիճանից: Եթե այնպիսի երեխաներ են, ովքեր ունեն պահպանված ինտելեկտ, որոշակի ինքնավերահսկողություն, ինքնասպասարկում, չունեն լուրջ վարքային խանգարումներ, կարող են լինել նաև մինչև 4-5 երեխա: Այս դեպքում անգամ առանց ուղեկցող- մասնագետի մանկավարժը կհասցնի ժամանակ տրամադրել և դասի մեջ ներգարվել նաև ներառված երեխաներին:
Զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ներռաման որոշ չափանիշների մշակում: Ներառական դպրոցներ ընդունելիս լավ կլիներ պարզել երեխայի ինտելեկտուալ զարգացման մակարդակը: Արդյո՞ք նա ի վիճակի է հաղթահարել կրթական ծրագրով նախատեսվածի գոնե նվազագույնը: Ծանր մտավոր հետամնացությամբ երեխաները ներառական դպրոցում կարելի է ասել ապահովում են միայն ֆիզիկական ներկայություն, մինչդեռ, եթե նրանք գտնվեին հատուկ դպրոցում կուսուցանվեին իրենց համար և իրենց մտավոր զարգացմանը համապատասխան ծրագրով, ինչը, կարծում եմ, առավել արդյունավետ կլիներ նրանց համար: Ի վերջո ավելի լավ է դանդաղ զարգացումը, քան տեղում մնալը: Հատուկ դպրոցում նրանք նաև չէին տարբերվի իրենց հասակակիցներից և չեն ենթարկվի ծաղրի: Սակայն պետք է նշել նաև, որ հակառակ երևույթն էլ է հաճախ տեղի ունենում, երբ հատուկ դպրոցներում հայտնվում են այնպիսի աշակերտներ, ովքեր ներառական դպրոցներում մեծ առաջընթաց կունենային:
Նախապատրաստական անհատական աշխատանք վարքային խանգարումների դեպքում: Վարքային խանգարումներով անձանց կարելի է ներառել միայն համոզված լինելու դեպքում, որ նրանք անվտանգ են շրջապատողների համար:
ԲՄԹ-ում ներգրավված լինեն միայն համապատասխան կրթություն և որակավորում ունեցող մասնագետներ, ովքեր պարբերաբար վերապատրաստվում են, քանի որ հատուկ կրթության ոլորտը անընդհատ փոփոխվող և զարգացող ոլորտ է:

Այդուհանդերձ, մեր հանրապետությունում բուռն կերպով առաջ է ընթանում ներառական գաղափարախոսությունը, ավելանում է ներառական կրթություն իրականացնող դպրոցների քանակը, անընդհատ լուսաբանվում է ներառական կրթության մասին, ձեռնարկվում են քայլեր հոգեկան, ֆիզիկական և մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին հասարակության մեջ ներգրավելու ուղղությամբ: Բայց, ցավոք, այդ ամենն իրականացվում է տեսականորեն, իսկ պրատիկ դաշտում դեռևս առկա են մի շարք բացթողումներ:

2. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթության գաղափարի երաշխիքը մարդու կրթության իրավունքն է: Ներառական կրթությունը հոգ է տանում բոլոր սովորողների մասին, հատկապես նրանց, ովքեր զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից՝ նկատի ունենալով հատուկ կարիքներով սովորողներին, հաշմանդամներին և այլոց: Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դպրոցներին ծառայել բոլոր երեխաներին:

Այս համակարգում դեռևս առկա են մի շարք բացթողումներ և խնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ անդրադառնում են ներառական կրթության որակի վրա, և այն երբեմն կրում է ձևական բնույթ: Կարծում ենք, որ նման խնդիրների պարզումը և բարձրաձայնումը ևս մի առիթ է դրանց մասին խորհելու, դրանց լուծման ուղիները որոնելու և կիրառության մեջ դնելու տեսանկյունից:

Ներառական կրթությունը, որպես կրթական նոր մոտեցում, ենթադրում է, որ առաջընթացն ավելի հավանական կլինի, եթե մենք ընդունենք, որ երեխաների դժվարությունները դպրոցների կազմակերպման ձևերի և ուսումնական մեթոդների ոչ ճկուն լինելու հետևանք են: Ենթադրում է նաև, որ անհատական տարբերությունները ոչ թե լուծման ենթական պրոբլեմներ են, այլ ուսումնական գործընթացը հարստացնող հնարավորություններ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բազմաթիվ երեխաների համար դպրոցի հիմնական գործառույթը սոցիալականացումն է, երբեմն հնարավոր է, որ դպրոցում երեխան ակադեմիական մեծ առաջընթաց այդպես էլ չգրանցի, սակայն դա կարող է անգնահատելի ազդեցություն ունենալ երեխայի կյանքի որակի վրա: Ուստի, կարևոր է, որ ուսուցիչը կարողանա երեխային սովորեցնել նաև սոցիալական հմտություններ. այն է՝ դիմել մյուս երեխաներին, օգնություն խնդրել, հարցեր տալ կամ պատասխանել հարցերին, միանալ խմբային խաղերին: Դեռահասության շրջանում հաշմանդամություն կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների մեջ ավելի է սրվում այն զգացողությունը, որ իրենք տարբերվում են դասընկերներից և այդ սոցիալական խմբի մասը չեն կազմում: Այս տարիքում կարևոր է ավելի շատ ուշադրություն հատկացնել նման աշակերտին՝ հաճախակի մոտենալ, ընդգրկել փոքր խմբերի մեջ, խրախուսել մտերմությունն այլ աշակերտների հետ:

Բոլոր աշակերտներին որակյալ կրթության տրամադրումը լուրջ մարտահրավեր է ուսուցիչների համար: Ներառական կրթությունը պահանջում է մասնագետների և ընտանիքների կողմից ուսուցման գործընթացի վերակառուցում և երեխաների համար լավագույն միջավայրերի ստեղծում համատեղ ջանքերով, որպեսզի հաջողության հասնեն դպրոցում և հասարակական կյանքում: Նման համակառուցումը պահանջում է ոչ միայն ուսուցիչների համագործակցություն, այլև թիմային աշխատանքի տարբեր ձևերի կիրառում: Միևնույն ժամանակ այն պահանջում է դասավանդման նոր ձևեր, որոնք լավագույնս կապահովեն բոլոր ռեսուրսների պատշաճ օգտագործումը: Մինչ երկիրն անցնում է ներառական կրթության գործելակերպերին, թիմային աշխատանքը և համագործակցությունը կարևորվում են կրթության բոլոր մակարդակներում:

Պետք է իրատես լինել և խոստովանել Հայաստանում ներառական կրթության հետ կապված խնդիրներն ու խոչընդոտները բազմազան են և տարբեր ոլորների հետ կապված՝ շենքային, սոցիալ-տնտեսական, առողջապահական, ֆինանսական, քաղաքական, հասարակական, բարոյահոգեբանական, ազգային մտածելակերպի քարացած ու չարթարացված տեսակետների: Քաղաքակրթության հետ համաժամանակյա քայլեր անելու նպատակով պարզապես անհրաժեշտ է չեզոքացնել այս խոչընդոտները, լուծել անլուծելի թվացող խնդիրները և քայլ առ քայլ հասնելայն երկրների ցակին, որոնք բազմաթիվ փայլուն օրինակներ են կերտել, հասել մեծ հաջողությունների:

Հետազաոտական աշխատանքի ավարտին եկա այն եզրահանգմանը, որ դպրոցի միջավայրը դարձնելով հասանելի բոլորին, մենք հանգում ենք նրան, որ դպրոցի աշակերտները սկսում են յուրաքանչյուրին ընդունել այնպիսին ինչպիսին որ կա, առանց պիտակավորումների, համեմատության, ծաղրանքի, այլ ընդհակառակը շատ հաճախ աշակերտներն իրենք են օգնում և նպաստում ԿԱՊԿՈԻ աշակերտների առավել սահուն ընդգրկմանը դպրոցական միջավայր: Իսկ դրանում նաև շատ կարևոր է հենց մեր՝ մանկավարժներիս դերը:

Յուրաքանչյուր փոքրիկ հաջողություն կարող է մեծ նշանակություն ունենալ երեխայի և իր ծնողների կյանքում: Ուստի, մենք՝ մանկավարժներս, պիտի կարողանանք յուրաքանչյուր երեխայի մեջ տեսնել այն լուսավոր և ուժեղ կողմերը, որի միջոցով նա հնարավորություն կունենա դրսևորել իրեն, քանզի կարծում եմ՝ մենք բոլորս հասարակական էակներ ենք, և մեր բոլորի միակ տեղը ներառական հասարակությունն է:

3. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ներառական կրթության իրականացման ուղեցույց (Հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար)։ Երևան 2008թ.
2. Ներառական կրթության կազմակերպման նեթոդական ուղեցույց ձեռնարկ, Երևան 2017 հեղինակային հրատարակություն,
3. Ներառական կրթության ռազմավարություններ/ 2019, Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան։ ՅՈՒՆԻՍԵՖ
4. Ներառական կրթությունը գործնականում։ Ուսումնամեթոդաբանական ձեռնարկ, Ս. Պետրոսյան. Երև. Աստղիկ 2018թ,
5. http://franseren.blogspot.com/2018/10/blog-post_29.html
6. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
7. https://ccd.armla.am/wp-content/uploads/2019/03/Town-hall-_report-%D5%BD%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6.pdf